




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ուչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1.215
4-15

26 NOV 2011

Ն. ԳԱԼՄԱ

ԿՈՒԿԱՆԸ

ԲԱՐՅԱ ԱՅՎԱՋՅԱՆ

և

ՃԱԳՊԱՐՆԵՐԸ



ՄԱՅԻՍ 1933 ՅԵՐԱՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

891.710.
4-15



891-714
4-15

ՆԱՄԱԿԸ 1.

БИБЛИОТЕКА
ИСТИТУТА
ВОСТОЧЕДОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Անձրև եր գալիս: Յերեխաները ձանձրացել էյին: Քթները կպը-
ցրած լուսամուտներին, նայում
էյին փողոցում անձրևաջրից գո-
յացող լճակներին: Հանկարծ սե-
նյակ մտավ ուսուցիչ Միխայիլ
Պետրովիչը: Նրա ձեռքիս մի նա-
մակ կար:

— Սենիա, — ասաց Միխայիլ
Պետրովիչը, — քեզ նամակ ե յեկեր:
Հավանական ե, փոր յեղորիցդ
լինի:

Սենիա Գրագևը բավականու-
թյունից նույնիսկ կարմրեց: Նրա
յեղբայրը, պիոներ Կոստիան,
ճամբարումն եր ապրում, — կո-
տնտեսության մեջ և աշխտեղից
շատ հետաքրքիր բաներ եր
գրում:

Յերեխաները տեղներից
թռչկոտեցին:

«Մենք շատ լավ ենք ապրում,
— գրում եր Կոստիան, — ողնում
ենք կոլտնտեսականներին տնա-
յին տնտեսության և բերքահա-
վաքի աշխատանքներում: Մենք
այստեղ ինկուբատոր ենք սար-
քել և յերեկ առաջին ճուտերը
դուրս յեկան: Բոլոր կոլտնտեսա-
կաններն ասում են թե պիոներ-
ները գործունյա յերեխաներ են:

Սենիա, գրիր թե մեր յերե-
խաներն ի՞նչ աշխատանք են
կատարում և ինչո՞վ են զբաղ-
վում»:

Միխայիլ Պետրովիչը վերջա-
ցրեց: Լուսթյուն ախրեց: Յերե-
խաները իրար նայեցին:



— Դե՛հ, — ասաց Միխայիլ
Պետրովիչը, — ինչ ե՞ք Կոստիային
պատասխանելու:

Յերեխաները շարունակում
էյին լռել: Պատասխանելու վոչ
ինչ չունեյին:



— Յերեկ մենք նկարներ կտրտեցինք, — անհամարձակ խոսեց Սենիան:

Բայց նրան ծաղրեցին:

— Նկարներ: Ա՛յ քեզ աշխատանք: Դու յեւ բան գտաւ պարծենալու համար:

Միխայիլ Պետրովիչը բարձրացրեց ձեռքը:

— Յերեխեք, յերեկ յես մի գործարանում եյի: Այնտեղ ինձ ճաշով հյուրասիրեցին: Յերկրորդ տեսակ ճաշ բերին, ինչ վոր հնգկահավի նման շատ համեղ մի բան: Յես հարցրի թե դա ի՞նչ է: Ինձ պատասխանեցին, վոր դա իրենց ճագարանոցի ճագարներից է: Մենք ինքներս ենք բազմացրել, — ասացին նրանք: Յերեխեք, առաջարկում եմ ձեզ՝ սկսեք ճագարներ պահել ու բազմացնել: Արտասահմանում վաղուց է ինչ գիտեն, վոր ճագարը համեղ միս ունի, սննդաբար է: Լոնդոնում հինգ որվա մեջ մեկ միլիոն հատ ճագար են ուտում: Մենք կսովորենք այդ կենդանիներին խնամել ու կերակրել: Իսկ հետո կսովորեցնենք ուրիշներին եւ: Այն ժամանակ Կոստիային կարող եք գրել, վոր կարեւոր գործ եք անում:

Վորքան վազեցի՜ր յերեխաները: «Ճագարներ՝ ճագարներ»: Ամբողջ ժամանակ ճագարների մասին եյին խոսում: Բայց ամենից շատ վոգեւորվել եր յերեխաներից ամենափոքրը:

— Կոլիա Կուկսը: Կոմունայի բոլոր միջանցքներով նա շրջում եր, քաջքայլով տրուսիկի ընդինից այնպես վոր արդեն թուլացել եր: Կուկսը հիմա սախաված եր տը, բուսիկն ամբողջ ժամանակ ձեռքով բռնել, վորպեսզի չընկնի վոտքերը:

Նախաճաշին կոտլետը ծամելով Կուկսը Ոլիա Սոկոլովային պատմում եր հենց միայն ճագարների մասին:

— Յերեվելի՜ գազաններ են: Դրանց համար պիտի ե ուտելիք հավաքել ու պահել... Թղթենու կանաչեղեն:

— Ի՛նչ: Ի՛նչ ես ասում, — չեր հասկանում Ոլիան:

Կոտլետը շատ տաք եր: Կուկսը խեղդվում եր, բայց ուզում եր անպատճառ ասելիքը վերջացնել:

Թղթենու կանաչեղեն: Անպայման կանաչ կանաչեղեն...

— Առաջ ծամիր վերջացրու, հետո կպատմես, — խորհուրդ տվեց նրան Ոլիան:

Կուկսը վերջնականապես վերափոխեց:

— Ճագարների մասին չես ուզում լսել մի լսիր, հետո կը խնդրես — չեմ պատմի:

Մի քանի որ անցկացրին դես ու գեն վազվզելով և շարժարկելով: Յերեխաները Միխայիլ Պետրովիչի հետ գնում եյին անտառ և Թղթենու ճյուղեր եյին պոկոտում: Թղթենու ճյուղերը, վորոնց մասին Կուկսը պատմում եր Ոլիային, բանից դուրս յեկավ, վոր ճագարների ամենասիրելի կերն են:



Հյուսնը շինել եր մի քանի մեծ վանդակներ:
Մոխրագույն յերկարականջ հյուսների համար բնակարան և կերը արդեն պատրաստ եր: Մնում եր ճարել կենդանիներին: Նշանակեցին մի որ, վոր գնան ճաղար գտնեն: Բայց զժբախտաբար Միխայիլ Պետրովիչին կենինգըղից կանչեցին իր հիվանդ մոր մոտ և յերեխաները ստիպեցին մենակ գնալու:

Գնացին կենդանաբանական այգու խանութը:

— Ճաղար ունե՞ք:

— Վո՛չ: Բոլորը վաճառվել են:

Յերեխաների դեմքերը վրդովեցին, իսկ նրանց, վաճառողը ցույց ե տալիս.

— Ահա ունենք լորդուներ, յեղջյուրավոր բուեր, ճնճողւկներ, զեղճանիկներ, ծովային խոզեր... Ինչո՞ւ յեք անպայման ճաղար ուզում: Գուցե՞ թռչուններ վերցնեք: Կուկսը բոլորովին չեք ուզում դատարկաձեռն հեռ գառնալ: Նա առաջարկեց:

— Յերեխեք, յեկեք մի բան գնենք. զեղճանիկ գնենք ելի:

— Դեղճանիկը դու քեզ համար գնիր: Կնստես ու կլսես թե ինչպես և յերգում: Իսկ մեզ ճաղարներ են պետք գործի համար:

Կուկսը ստիպեց լուել:

ԾԵՐ ՃԱԳԱՐԸ

Մյուս որը Ուիլիամ Սոկոլովան, մի պարկի մեջ, հանդիսավոր կերպով բերեց մի մեծ ճաղար:

— Քեռուս մոտ ճարեցի, բացատրեց նա, — հաղիվ տվեց: Նա յերեք սիրելիներ ունի. շուն, աղամսի և ահա այս ճաղարը: Իսկ բոլորը միասին յերկու հարյուր տարեկան են:

Իսկապես վոր ճաղարը բավական տարիքավոր եր:


Նրա գլուխը ճերմակ եր, ականջները տխուր ցած եյին կախվել և ատամները լրիվ չեյին: Թղթենու ալելը նա միտեսակ կողքով եր ծամում և այդ ժամանակ նրա քիթը սաստիկ կնճռտվում եր:

Բայց չնայած դրան, նա իսկական, կենդանի ճաղար եր և յերեխաները որերով ցցված կանգնած եյին մնում նրա վանդակի մոտ:

— Յե՞րբ վերջապես դուրս կգան ճագերը:

Բայց ճագերը չկային: Ճաղարը լավ կազդուրվել եր, իսկ յերեխաներին արդեն ձանձրալի յեր սպասել:

— Մույլ ե: Նրանից վո՛չ մի ոգուս չկա:



ԿՈՒԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒՄ Ե



Միայն Կուկսը համառորեն հերթապահում էր ճագարի վանդակի մոտ և հետևում էր կենդանու ամեն մի շարժումին։ չլինի թե աչքաթող անի ձագերի դուրս գալը։

Միխայիլ Պետրովիչը վերադարձավ։ Լենինգրադից գալուն պես զնաց ուղիղ դեպի վանդակները։

— Հը՞, ինչպե՞ս են ձեր գործերը։ Ճագարները բազմացել են։

— Քեռի Միշա, ահա մի ճագար ճարել ենք, իսկ նա տեղից անգամ չի շարժվում։ Մենք տաս որ ե ինչ սպասում ենք։

— Ինչպե՞ս։ Մի ճագարից ձագեր եք ուզում դուրս գան։

Միխայիլ Պետրովիչը ծիծաղեց և բացատրեց յերեսաներին, փոր ճագարներ բազմացնելու համար հարկավոր ե փոշ թե մի ճագար, այլ յերկուսը—արու և եգ։

— Իսկ այս մեր ճագարից դուք փոշ թե տաս որում։ այլ նա չիսկ տասը տարում փոշին չեք ստանա,—ասաց Միխայիլ Պետրովիչը։

Միխայիլ Պետրովիչը նրանց ոգնեց ճագարներ ճարելու։

Անցել էր կես տարի։ Յերեսաները հիմա փոշ թե մեկ, այլ հարյուր հատ ճագար ունեյին։ Իսկ ճագարանոցը հայտնի յեր դռնի առաջ շրջանում։ Հեռու տեղից բանվորներ եյին դալիս նայելու ճագարներին, նրանց կերակրելու և խնամելու մասին խորհուրդներ հարցնելու։

Կուկս Կուկսը բացատրություններն արդեն բերանացի գիտեր և կրկնում էր նույնը բոլորին։

— Վրանեղդ կռով մայրեր,— խտտորեն ասում էր նա հաճախորդներին։ Յեթե փոշ դուք ճագարներին կվարակեր։

Յեվ մինչ հաճախորդները զբաղվում են կրովի արկով մեջ փռները մաքրելով, Կուկսը բացատրում էր։

— Այս ճագարները կոտլետի համար ամենանաճագարներն են։

Կոչվում են Ֆլանդրեր։ Սրանք իրենց բունը շինում են հետևի փոտքերով։ Անպայման պետք ե ջուր դնել սրան համար։

— Իսկ քանի՞ անգամ պետք ե փոխել նրանց տակը,—հարցնում ե փորեկեց մեկը։ Բայց Կուկսը չի պատասխանում։ Նա շարունակում ե ասել այն, ինչ բերանացի սովորել ե։

— Յեթե ջուր չդնեք, մայրը շոգ ժամանակ կարող ե ուտել բոլոր ձագերին...

— Այ տղա,—լսիր, դու ասա մեզ թե ի՞նչպիս պետք ե լվանալ վանդակները։

Իսկ Կուկսը իրենն էր շարունակում։

— Շոգ ժամանակ մայրը կարող ե ուտել ձագերին...

Կոլտնատեսությունից մի որ յեկավ Աննիա Գրաշևի յեղբայրը, պիտներ Կոստիան։

Նա վազեց դեպի յերեսաները։

— Յես լսել եմ, փոր դուք այստեղ դարձ եք սկսել։

Յերեսաները ուրախացան, փոր հիմիկ կարող են իրենց արած գործով պարծենալ։

Նրան տարան ճագարանոց, ցույց տվին բոլոր ճագարներին և ձագերին։ Ցույց տվին նաե ծեր ճագարին, փորը հիմա ապրում էր առանձին և հանգստանում էր։

— Գիտե՞ս, մենք հիմա գործարաններին ե այլ գրող-բողներին ել ենք ճագարներ տալիս,—ասաց Աննիան յեղբորը—թող նրանք ել զբաղվեն ճագարաբուծությամբ, ինչպես մենք։

Մոտեցավ Կուկսը և խտտորեն նայեց Կոստիայի վրա։

— Գնացեք և կրով մաքրեցեք ձեր փոտքերը։ հակառակ դեպքում դուք կարող եք ճագարներին վարակել։





ВНИИСТЕР
 ИНСТИТУТ
 ДОСТОКОВЕДЕНИЯ
 Академия Наук
 СССР



ВНИИСТЕР
 ИНСТИТУТ
 ДОСТОКОВЕДЕНИЯ
 Академия Наук
 СССР

МЭС ЧЛН ГРАЖДАН
 ГСС БЮЛИСТЕР
 ЗУУП-Арм ГСР
 ИМ. А. МАСКАНОВ
 И. УБРАТЧОВИЧЬ ИЛЧМ



57

ԳԻՆԵՅ ԿՈՊ.

ԶՄ

ИНСТИТУТ
ИСТОРИИ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

WD1
SMV



Պատ. № 1632 Գլադ 8236 (բ) Հրատ. 2665 Տիրած 3000



